

**«ԿԱՊԻՏԱԼ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Երևան, Ամիրյան 27, թիվ 14

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդհանուր դրույթներ

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն հանդիսանում է «Իկապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը, որը ստեղծվել է 2005թ.:

2007 թվականի օգոստոսին Ընկերությունը վերանվանվել է «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության:

2006թ. նոյեմբերի 23-ին Ընկերությունը ստացել է բրոքերային գործունեության և հավատարմագրային կառավարման գործունեության լիցենզիաներ, իսկ 2007 թվականի հոկտեմբերին ստացել է արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի լիցենզիա:

2008թ. հունիսի 27-ին ընկերությունը վերագրանցվել է ՀՀ ԿԲ-ում որպես ներդրումային ընկերություն և ստացել թիվ 6 լիցենզիան:

Ընկերությունն ունի երկու բաժնետեր՝ Տիգրան Կարապետյան (66.67%) և Արմեն Մկրյան (33.33%): «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի ղեկավար մարմիններն են հանդիսանում բաժնետերերի ընդհանուր ժողովը և գլխավոր տնօրենը: Գլխավոր տնօրենի պաշտոնը զբաղեցնում է Տիգրան Կարապետյանը:

Ընկերությունը մինչ այժմ գործունեություն է իրականացրել արժեթղթերի և արտարժույթի շուկաներում՝ մասնավորապես

- իրականացրել է արժեթղթերի տեղաբաշխում,
- մատուցել է արժեթղթերի հավատարմագրային կառավարման ծառայություններ,
- հանդիսացել է արժեթղթերի բրոքեր և դիլեր,
- մատուցել է ռեեստրավարման և պահառության ծառայություններ,
- տրամադրել է խորհրդատվություն արժեթղթերի շուկայի վերաբերյալ,
- իրականացրել է արտարժույթի անկանխիկ առուվաճառքի գործառնություններ:

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրված են 2012թ. մարտի 15-ին:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և Պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ), ՀՀ ԿԲ-ի կողմից հաստատված համապատասխան իրավական նորմատիվ ակտերին (այնքանով, որքանով դրանք տեղավորվում են ՖՀՄՍ շրջանակում) և ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան:

2.2 Չափման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են չափման սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների, որոնք վերաչափվում են իրական արժեքով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հայաստանի Հանրապետության արժույթը ՀՀ դրամն է, որը Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունում թվերը ներառվում են հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

3.1 Հիմնական միջոցներ

(a) Ճանաչումը և չափումը

Հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանը և նպատակային նշանակության համար պատրաստի վիճակի բերելուն ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Երբ որևէ հիմնական միջոցի մասերն ունեն տարբեր օգտակար ծառայություններ, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (խոշոր բաղադրիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից օգուտը կամ վնասը որոշվում է որպես օտարումից մուտքերի և օտարված հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն, որը զուտ հիմունքով ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ ոչ գործառնական շահույթի կամ վնասի կազմում:

(b) Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցի առանձին մասերի փոխարինման ծախսումները ճանաչվում են այդ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում, եթե հավանական է, որ այդ մասի մեջ մարմնավորված ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Հիմնական միջոցների առօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում դրանց կատարման ժամանակ:

(c) Մաշվածություն

Մաշվածությունը հաշվարկվում է մաշվող գումարի նկատմամբ, որն իրենից ներկայացնում է ակտիվի սկզբնական արժեքը կամ դրան փոխարինող գումարը՝ հանած մնացորդային արժեքը:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի համար գնահատված օգտակար ծառայությունների ընթացքում, քանի որ դա առավելագույնս է արտացոլում ակտիվներում մարմնավորված ապագա տնտեսական օգուտների սպառման ակնկալվող եղանակը:

Ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար գնահատված օգտակար ծառայությունները ներկայացված են ստորև.

Համակարգչային տեխնիկա 3-5 տարի

Տնտեսական և գրասենյակային գույք, այլ հիմնական միջոցներ 5 տարի:

Մաշվածության հաշվարկման մեթոդները, օգտակար ծառայությունները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջի դրությամբ և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են:

3.2 Ոչ նյութական ակտիվներ

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ դրանք ավելացնում են այն կոնկրետ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները, որին դրանք վերաբերում են: Բոլոր մնացած հետագա ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարման ժամանակ:

Ամորտիզացիան հաշվարկվում է ամորտիզացվող գումարի նկատմամբ, որն իրենից ներկայացնում է ակտիվի սկզբնական արժեքը կամ դրան փոխարինող գումարը՝ հանած մնացորդային արժեքը:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային հիմունքով՝ ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայությունների ընթացքում:

Ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար գնահատված օգտակար ծառայությունները ներկայացված են ստորև.

Համակարգչային հաշվապահական ծրագիր և այլ ոչ նյութական ակտիվներ 5 տարի

Համակարգչային ռեեստրավարման ծրագիր 10 տարի:

3. Էական սխալների ուղղման և հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխությունների ազդեցության արտացոլման մոտեցումները՝ նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող էական սխալների ուղղման գումարը արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվություններում՝ ճշտելով չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը: Համադրելի տեղեկատվությունը վերաներկայացվում է, քանի դեռ դա իրագործելի է:

4. Ծառայությունների մատուցման պայմանագրերի գծով հասույթի ճանաչման համար գործարքի ավարտվածության աստիճանի որոշման մոտեցումը՝ երբ ծառայության մատուցման գործարքի արդյունքները հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է ֆինանսական հաշվետվության ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանի հիման վրա, հակառակ դեպքում հասույթը ճանաչվում է միայն ճանաչված այն ծախսերի չափով, որոնք կփոխհատուցվեն:

5. Արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոտեցումը՝ փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում կամ երբ դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

6. Փոխառության ծախսումների հաշվառման մոտեցումը՝ փոխառության ծախսերը ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվում (հաշվեգրվում) են, բացառությամբ որակավորվող ակտիվներին վերաբերողները, որոնք կապիտալացվում են ՀՀՄՍ

23-ին համապատասխան: Վարկերը և փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

7. Առևտրական նպատակներով պահվող (ԱՆՊ) ֆինանսական ակտիվներ՝ ԱՆՊ ֆինանսական ակտիվները յուրաքանչյուր ամսի վերջին օրվա դրությամբ վերաչափվում են իրական արժեքով՝ իրական արժեքից առաջացող օգուտները (կորուստները) ճանաչելով տվյալ ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում՝ որպես առևտրական նպատակներով պահվող ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ՝ ներառելով առևտրային գործունեությունից զուտ եկամուտների կազմում: ԱՆՊ ֆինանսական ակտիվների վաճառքի դեպքում դրանց վաճառքից ստացվող (ստացվելիք) գումարը և վաճառված ԱՆՊ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքի (ներառյալ՝ իրական արժեքով ճշտումները) տարբերությունը ներկայացվում է որպես առևտրական նպատակներով պահվող ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ:

8. ՌԵՊՈ պայմանագրով ստացված և տրված արժեթղթեր՝ ՌԵՊՈ պայմանագրերով ստացված արժեթղթերը հաշվառվում են արտահաշվեկշռում՝ որպես տրամադրված փոխառությունների ապահովություն: ՌԵՊՈ պայմանագրերով ստացված արժեթղթերի դիմաց վճարված գումարները հաշվառվում են որպես տրամադրված փոխառություններ: Դրանց գծով ստացվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում և ներկայացվում այլ գործառնական եկամուտների կազմում: ՌԵՊՈ պայմանագրերով տրված արժեթղթերը հաշվառվում են հաշվեկշռում՝ իրենց բնույթին համապատասխան: ՌԵՊՈ պայմանագրերով տրված արժեթղթերի դիմաց ստացված գումարները հաշվառվում են որպես ստացված փոխառություններ: Դրանց գծով վճարվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում տոկոսային ծախսերի կազմում:

9. Մինչև մարման ժամկետը պահվող (ՄՄԺՊ) ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

10. Արտարժույթի առք-վաճառքի եկամուտներ և ծախսեր՝ արտարժույթի առք-վաճառքի գործառնություններից ստացված զուտ շահույթը (վնասը) ներկայացվում է որպես առևտրային գործունեությունից զուտ շահույթի կամ վնասի կազմում:

11. Շահութահարկի գծով ծախսը (եկամուտը) բաղկացած է ընթացիկ հարկի գծով ծախսից և հետաձգված հարկի գծով ծախսից (եկամտից): Շահութահարկի գծով ծախսը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն գործարքների գծով առաջացած հարկի, որոնց արդյունքները ուղղակիորեն ճանաչվում է են սեփական կապիտալում: Վերջին դեպքում շահութահարկի գծով ծախսը նույնպես ճանաչվում է սեփական կապիտալում: Ընթացիկ հարկի գծով ծախսը ընթացիկ տարվա հարկվող շահույթից վճարման ենթակա շահութահարկն է և նախորդ տարիների ընթացիկ հարկի ճշգրտումներ: Հետաձգված հարկի գծով ծախսը (եկամուտը) հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների մնացորդների փոփոխություններ արդյունքն է: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են, այնքանով, որքանով հավանական է ապագա ժամանակաշրջաններում բավարար հարկվող շահույթի ստացումը, որի հաշվին կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները և հաջորդ ժամանակաշրջան տեղափոխվող հարկային վնասները:

Ծանոթագրություն 3. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	01.01.2011-31.12.2011	01.01.2010-31.12.2010
Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից	38	5,481
Տոկոսային եկամուտներ արժեթղթերից	123,370	92,112
Տոկոսային եկամուտներ տրված վարկերից (փոխառություններից)	1,207	388
Ընդամենը	124,615	97,981
Տոկոսային և նմանատիպ ծախսեր		
Տոկոսային ծախսեր ներգրավված փոխառությունների և ստացված վարկերի դիմաց	(13,173)	(17,550)
Տոկոսային ծախսեր ռեպո համաձայնագրերի գծով	(72,773)	(56,949)
Ընդամենը	(85,946)	(74,499)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	38,669	23,482

Ծանոթագրություն 4. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	01.01.2011-31.12.2011	01.01.2010-31.12.2010
Արժեթղթերի փաթեթի կառավարման գծով միջնորդավճարներից	1,527	5,330
Արժեթղթերով գործարքներից միջնորդավճարներից	134	127
Խորհրդատվական ծառայությունների գծով միջնորդավճարներից	1,203	3,613
Արժեթղթերի տեղաբաշխման գծով միջնորդավճարներից	-	1,500
Պահառության գործունեությունից	5,557	5,120
Ընդամենը	8,421	15,690
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		
Միջնորդավճարների գծով ծախսեր	(1,280)	(1,702)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	7,141	13,988

Ծանոթագրություն 5. Եկամուտ շահաբաժիններից

Շահաբաժիններ	01.01.2011-31.12.2011	01.01.2010-31.12.2010
Սովորական բաժնետոմսերի գծով վճարված շահաբաժիններ	310	-
Ընդամենը	310	-

Ծանոթագրություն 6. Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից

Առևտրական նպատակներով պահվող ներդրումներից	01.01.2011-31.12.2011	01.01.2010-31.12.2010
Առևտրական նպատակներով պահվող ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ	5,929	(5,905)
Առևտրական նպատակներով պահվող ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	13,554	4,759
Ընդամենը	19,483	(1,146)

Արտարժույթային գործառնություններից	01.01.2011-31.12.2011	01.01.2010-31.12.2010
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	(5,707)	(5,884)
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	(9,227)	17,710
Ընդամենը	(14,934)	11,826
Ընդամենը զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	4,549	10,680

Ծանոթագրություն 7. Այլ գործառնական եկամուտ

Ընկերությունը այլ գործառնական եկամուտներ չունի:

Ծանոթագրություն 8. Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին

Ընկերությունը զուտ ակտիվների հնարավոր կորուստների պահուստին մասհանումներ հաշվետու և նախորդ ժամանակաշրջաններում չի իրականացրել:

Ծանոթագրություն 9. Ընդհանուր վարչական ծախսեր

Ընդհանուր վարչական ծախսեր	01.01.2011-31.12.2011	01.01.2010-31.12.2010
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով	(18,358)	(14,095)
Ծախսեր սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին հատկացումների գծով	(2,404)	(2,029)
Գործուղման և ուսուցման գծով ծախսեր	(835)	-
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	(9,600)	(9,600)
Ներդրումային ընկերության շենքի և սարքավորումների, սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(969)	(955)
Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	(4,000)	(3,940)
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	(899)	(915)
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	(1,026)	(1,194)
Զփոխհատուցվող հարկեր և տուրքեր	(3,619)	(3,624)
Այլ վարչական ծախսեր	(510)	(113)
Ընդամենը	(42,220)	(36,465)

2011 թ.ընթացքում աշխատողների թիվը եղել է 11, իսկ մեկ աշխատողին բաժին ընկնող միջին աշխատավարձը՝ 132 հազ. դրամ (2010-ի համար՝ աշխատողների թիվը՝ 10 և մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձը՝ 103 հազ. դրամ):

Ծանոթագրություն 10. Այլ գործառնական ծախսեր

<u>Այլ գործառնական ծախսեր</u>	<u>01.01.2011-31.12.2011</u>	<u>01.01.2010-31.12.2010</u>
Հասարակական կապերի գծով ծախսեր	-	(180)
Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր	(2,134)	(2,045)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	(319)	(199)
Այլ ծախսեր	-	-
Ընդամենը	(2,453)	(2,424)

Ծանոթագրություն 11. Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ(վնաս)

Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ(վնաս) ընկերությունը չի ունեցել :

Ծանոթագրություն 12. Շահութահարկի գծով ծախս

<u>Շահութահարկի գծով ծախս</u>	<u>01.01.2011-31.12.2011</u>	<u>01.01.2010-31.12.2010</u>
Ընթացիկ հարկի գծով ծախս	852	-
Հետաձգված հարկի գծով ծախս (Եկամուտ)	2,130	(1,691)
Ընդամենը	2,982	(1,691)

Շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

	2011թ. հունվար- դեկտեմբեր	Արդյունավետ դրույքաչափ (%)	2010թ. հունվար- դեկտեմբեր	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթը մինչև հարկումը	5,996	-	9,261	-
Շահութահարկ՝ դրույքաչափով	1,199	20.00	1,852	20.00
Չհարկվող եկամուտներ (ստացված շահաբաժիններ)	(62)	(1.03)	-	-
Չհարկվող եկամուտներ (արտարժույթի փոխարժեքային տարբերություններ)	-	-	(3,543)	38.25
Չնվազեցվող ծախսեր (արտարժույթի փոխարժեքային տարբերություններ)	1,844	30.76	-	-
Շահութահարկի գծով ծախս	2,982	49.73	(1,691)	18.25

3.11.3. Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկը.

	Մնացորդը առ 31.12.10 դրությամբ	2011թ. շահույթում կամ վնասում ճանաչված	Մնացորդը առ 31.12.11 դրությամբ
Հետաձգված հարկային ակտիվներ, այդ թվում՝	1,253	(243)	1,010
Այլ ակտիվների գծով	160	(160)	-
Ստեղծված պահուստների գծով	524	175	699
Այլ պարտավորությունների գծով	569	(258)	311
Հետաձգված հարկային պարտավորություններ, այդ	(1,078)	(123)	(1,201)

թվում՝

Առևտրական նպատակներով պահվող արժեթղթերի գծով

Այլ պարտավորությունների գծով

Այլ ակտիվների գծով

Ջուր հեղածգված հարկային**ակտիվ/պարտավորություն****Հաջորդ ժամանակաշրջանի տեղափոխվող հարկային վնաս****Ընդամենը զուտ հեղածգված հարկային ակտիվի (պարտավորության) շարժը**

	(778)	(423)	(1,201)
	-	-	-
	(300)	300	-
	175	(366)	(191)
	1,764	(1,764)	-
	1,939	(2,130)	(191)

Ծանոթագրություն 13. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

Հաշվետու ժամանակաշրջաններում շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի թվի փոփոխություն տեղի չի ունեցել: Շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի կշռված միջին թիվը ստանալու համար որպես հայտարար օգտագործվել է հաշվետու ժամանակաշրջաններում յուրաքանչյուր օրվա գրությամբ բաժնետոմսերի թվի հանրագումարը հարաբերած տվյալ հաշվետու ժամանակաշրջանի օրերի թվի վրա: 2010 թվականի նոյեմբեր ամսին տեղի է ունեցել կանոնադրական կապիտալի համալրում՝ 15 հազար հատ սովորական 10,000 անվանական արժեքով բաժնետոմսերի թողարկման միջոցով, որոնք ամբողջությամբ տեղաբաշխվել և վճարվել են:

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ**01.01.2011-31.12.2011****01.01.2010-31.12.2010**

Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ հարկումից հետո
 Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով
 Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս)
 Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը
 Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ
 Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ

	3,014	10,952
	-	-
	3,014	10,952
	30,000	17,466
	0.100	0.627
	0.110	0.627

Ծանոթագրություն 14. Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում**14.1. Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում****Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում**

Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում

	առ 31.12.11	առ 31.12.10
	-	-

14.2. Դրամական միջոցների և դրանց համարժեքների կազմը

Դրամական միջոցներ ՀՀ կենտրոնական բանկում

	առ 31.12.11	առ 31.12.10
	-	-
	-	-

Ընդամենը

Դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդը 01.01.11 թ. կազմել է 7,966 հազ. ՀՀ դրամ (01.01.10 թ. 6,738 հազ. ՀՀ դրամ) :

2011 և 2010 թվականների հաշվետու ամսաթվի դրությամբ զուտ աճը (նվազումը) համապատասխանաբար կազմել է (5,826) և 2,465 հազ. ՀՀ դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա եղել է 173 հազ. և (1,236) հազ. ՀՀ դրամ: Մնացորդը 31.12.11 և 31.12.10 թվականի վերջում կազմել է 2,313 և 7,966 հազ. ՀՀ դրամ և այն օգտագործման որևէ սահմանափակում չկա:

Ծանոթագրություն 15. Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Ընթացիկ հաշիվներ	առ 31.12.11	առ 31.12.10
ՀՀ բանկերում	2,313	7,966
Ընդամենը	2,313	7,966
Վարկեր (տրամադրված փոխառություններ) և ավանդներ, այլ պահանջներ	-	-
Հաշվեգրած տոկոսներ	-	-
Ընդամենը	2,313	7,966
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով հնարավոր կորուստների պահուստ	(-)	(-)
Զուտ պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,313	7,966

Ծանոթագրություն 16. Պահանջներ հաճախորդների նկատմամբ

Պահանջներ հաճախորդների նկատմամբ	առ 31.12.11	առ 31.12.10
Վարկեր և տրամադրված փոխառություններ, այդ թվում՝ ռեպո (հետգնման) համաձայնագրեր	-	-
Այլ	24,150	24,150
Նշված հոդվածների գծով հաշվեգրված տոկոսներ	-	255
Ընդամենը պահանջներ	24,150	24,405
Հաճախորդների նկատմամբ պահանջների հնարավոր կորուստների պահուստ	(-)	(-)
Ընդամենը զուտ պահանջներ	24,150	24,405

Հաշվետու և նախորդ հաշվետու ժամանակաշրջանների վերջում Ընկերությունը ժամկետանց, խնդրահարույց և արժեզրկված վարկեր և տրամադրված փոխառություններ չի ունեցել:

Ընկերությունը չունի նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից իրականացված ֆինանսավորման ծրագրերի շրջանակներում ստացված և տեղաբաշխված միջոցներ:

Վերոնշյալ փոխառությունը ամբողջությամբ տրամադրվել է Ընկերությանը փոխկապակցված կողմ հանդիսացող «Կորպորատիվ կառավարման կենտրոն» հիմնադրամին (տես՝ ծանոթագրություն 36), որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:

Ծանոթագրություն 17. Առևտրական նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ

<u>Պետական արժեթղթեր</u>	առ 31.12.11	առ 31.12.10
ՀՀ պետական արժեթղթեր, այդ թվում՝ գանձապետական պարտատոմսեր	215,515	197,657
Ընդամենը պետական արժեթղթեր	215,515	197,657
Այդ թվում՝ ՀՀ բանկերին ռեպո համաձայնագրով վաճառված <u>ՀՀ ոչ պետական արժեթղթեր</u>	213,038	186,529
	առ 31.12.11	առ 31.12.10
	ցուցակված	ցուցակված
ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի երկարաժամկետ պարտքային գործիքներ	259,475	821,038
Ընդամենը ՀՀ ոչ պետական առևտրային նպատակով պահվող արժեթղթեր	259,475	821,038
Այդ թվում՝ ՀՀ բանկերին ռեպո համաձայնագրով վաճառված <u>Առևտրական նպատակներով պահվող այլ ֆինանսական ակտիվներ</u>	29,974	434,954
Ֆորվարդ	-	1,462
Փոխարժեքային սվոպ	-	780
Ընդամենը	-	2,242
Ընդամենը առևտրական նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ	474,990	1,020,937

Ծանոթագրություն 18. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ չունի:

Ծանոթագրություն 19. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

<u>Պետական արժեթղթեր</u>	առ 31.12.11	առ 31.12.10
ՀՀ պետական արժեթղթեր, այդ թվում՝ գանձապետական պարտատոմսեր	206,771	206,771
Ընդամենը պետական արժեթղթեր	206,771	206,771
Այդ թվում՝ ՀՀ բանկերին ռեպո համաձայնագրով վաճառված <u>Հաշվեգրված տոկոսներ</u>	185,969	203,166
	3,948	4,303
Ընդամենը մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ	210,719	211,074

Ծանոթագրություն 20. Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում

Ընկերությունը այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներ չունի:

Ծանոթագրություն 21. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցներ

Հոդվածի անվանումը

**Համակ. և կապի
միջոցներ**

**Այլ հիմն.
միջոցներ**

Ընդամենը

Սկզբնական արժեք

Մնացորդը 01.01.10 թվականի վերջում

4,355

5,727

10,082

Ավելացում

685

-

685

Օտարում

-

-

-

Մնացորդը 31.12.10 թվականի վերջում

5,040

5,727

10,767

Ավելացում

83

-

83

Մնացորդը 31.12.11 վերջում

5,123

5,727

10,850

Կուտակված մաշվածություն

Մնացորդը 01.01.10 թվականի վերջում

1,652

1,244

2,896

Ավելացում

882

1,139

2,021

Օտարում

-

-

-

Մնացորդը 31.12.10 թվականի վերջում

2,534

2,383

4,917

Ավելացում

970

1,127

2,097

Մնացորդ 31.12.11 վերջում

3,504

3,510

7,014

Զուտ հաշվեկշռային արժեք

31.12.11 վերջում

1,619

2,217

3,836

31.12.10 վերջում

2,506

3,344

5,850

Ոչ նյութական ակտիվներ

**Համակարգչային
ծրագրեր**

**Այլ ոչ նյութական
ակտիվներ**

Ընդամենը

Սկզբնական արժեք

Մնացորդը 01.01.10 թվականի վերջում

165

520

685

Ավելացում

534

-

354

Մնացորդը 31.12.10 թվականի վերջում

699

520

1,219

Ավելացում

1,800

-

1,800

Մնացորդը 31.12.11 վերջում

2,499

520

3,019

Կուտակված ամորտիզացիա

Մնացորդը 01.01.10թ.

74

155

229

Ավելացում

95

104

199

Մնացորդը 31.12.10թ.

169

259

428

Ավելացում

215

104

214

Մնացորդը 31.12.11թ.

384

363

747

Զուտ հաշվեկշռային արժեք

31.12.11 թվականի

2,115

157

2,272

31.12.10 թվականի

530

261

791

Ծանոթագրություն 22. Հետաձգված հարկային ակտիվներ

Տես՝ ծանոթագրություն 12:

Ծանոթագրություն 23. Այլ ակտիվներ

Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ

Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով
 Դեբիտորական պարտքեր հաճախորդների գծով
 Կանխավճարներ մատակարարներին
 Կանխավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական
 ապահովագրության վճարների գծով
 Այլ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ

Ընդամենը

Այլ ակտիվներ

Ապագա ժամանակաշրջանի ծախսեր
 Այլ ակտիվներ

Ընդամենը

Ընդամենը այլ ակտիվներ

	առ 31.12.11	առ 31.12.10
	-	13
	1,474	3,164
	397	367
	-	406
	1,175	288
3,046	4,238	
	25	25
	179	340
204	365	
3,250	4,603	

Ծանոթագրություն 24. Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Ներգրավված փոխառություններ և ավանդներ, այլ

ՀՀ բանկեր

Ավանդներ և փոխառություններ
 Ռեպո համաձայնագրեր

Հաշվեգրված տոկոսներ

Ընդամենը

	առ 31.12.11	առ 31.12.10
	-	181,720
	397,983	772,471
	677	2,897
398,660	957,088	

Ծանոթագրություն 25. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց նկատմամբ

Ներգրավված փոխառություններ
 Ռեպո համաձայնագրեր

Հաշվեգրված տոկոսներ

Ընդամենը

	առ 31.12.11	առ 31.12.10
	-	-
	-	-
	-	-
	-	-

Ծանոթագրություն 26. Առևտրական նպատակներով պահվող պարտավորություններ

<u>Առևտրական նպատակներով պահվող պարտավորություն</u>	առ 31.12.11	առ 31.12.10
Առևտրական նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ՝ Ֆորվարդ	1,554	2,844
Ընդամենը	1,554	2,844

Ծանոթագրություն 27. Ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթեր

Ընկերությունը թողարկված արժեթղթեր չունի:

Ծանոթագրություն 28. Հետաձգված հարկային պարտավորություններ

Տես՝ ծանոթագրություն 12:

Ծանոթագրություն 29. Պահուստներ

<u>Պահուստներ</u>	առ 31.12.11	առ 31.12.10
Սկզբնական մնացորդ	2,620	2,203
Պահուստին կատարված մասհանումներ	2,896	2,219
Պահուստի օգտագործում	(2,020)	(1,802)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	876	417
Վերջնական մնացորդ	3,496	2,620
Արձակուրդայինի գծով	2,496	1,620
Աուդիտի գծով	1,000	1,000

Երկու պահուստների գծով էլ ընկերությունն ունի իրավական պարտականություն: Դրանց արդյունքում դրամական արտահոսքերն ակնկալվում են տարվա ընթացքում և հաջորդ աուդիտի ժամանակ: Հաշվի առնելով կարճաժամկետ և ոչ էական լինելը, պահուստների գումարը որոշվել է առանց զեղչման:

Ընկերությունը պահուստավորում պահանջող այլ իրավական կամ կառուցողական պարտականություններ չունի: Ընկերության հանդեպ որևէ իրավական հայց հարուցված չկա: Ընկերությունն ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները, և իր հարկային պարտավորությունների գծով լրացուցիչ պահուստավորումների անհրաժեշտություն չկա:

Ծանոթագրություն 30. Այլ պարտավորություններ

<u>Այլ պարտավորություններ</u>	առ 31.12.11	առ 31.12.10
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով՝		
շահութահարկի գծով	256	-
ԱԱՀ-ի գծով	179	467
եկամտահարկի գծով	233	-
սոցիալական ապահով. վճարումների գծով	310	-
Կրեդիտորական պարտքեր մատակարարների նկատմամբ	171	1,151
Այլ պարտավորություններ	235	165
Մնացորդը ժամանակաշրջանի վերջում	1,383	1,783

Ծանոթագրություն 31. Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը 300,000 հազ. ՀՀ դրամ է, որը կազմում է 30,000 (երեսուն հազար) հատ տեղաբաշխված սովորական անվանական բաժնետոմս, որոնցից յուրաքանչյուրի անվանական արժեքը կազմում է 10,000 (տաս հազար) ՀՀ դրամ: Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ վճարված են:

Ընկերության հայտարարված բաժնետոմսերի քանակը կազմում է 70,000 (յոթանասուն հազար) հատ բաժնետոմս:

Ընկերության հայտարարած արտոնյալ բաժնետոմսերի քանակը կազմում է 3,000 (երեք հազար) հատ բաժնետոմս: Արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ է:

Նշանակալից մասնակցի անունը, ազգանունը/անվանումը	Ներդրումային ընկերությունում ունեցած մասնակցության գումարը	Ընկերությունում ունեցած մասնակցության չափը տոկոսային հարաբերությամբ
Արմեն Մկրյան	100,000	33,3%
Տիգրան Կարապետյան	200,000	67,7%

Ծանոթագրություն 35. Կապիտալի այլ տարրեր

Կապիտալի այլ՝ չբացահայտված տարրեր չկան:

Ծանոթագրություն 36. Գործարքներ կապակցված կողմերի հետ

1. Կազմակերպության կապակցված կողմ է հանդիսանում «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ն, որի բաժնետերը հանդիսանում է նաև կազմակերպության բաժնետեր: «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի հետ տարվա ընթացքում կատարվել են հետևյալ գործարքները.

- «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ին մատուցվել է ռեեստրավարման ծառայություն՝ ամսական 2000 ՀՀ դրամ արժեքով,
- «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի հետ կնքվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր՝ ամսական 960000 ՀՀ դրամ արժեքով (ներառյալ՝ ԱԱՀ-ն), համաձայն որի Կազմակերպությունը Ամիրյան 27/14 հասցեում վարձակալել է գրասենյակային տարածք,

31.12.11թ. դրությամբ առկա է 9.6 հազ. ՀՀ դրամ դեբիտորական պարտք «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ին ռեեստրի վարման շրջանակներում մատուցած ծառայությունների համար: Նախորդ ժամանակաշրջանի նույն ամսաթվի դրությամբ առկա է 960 հազ. ՀՀ դրամ կրեդիտորական պարտք Ամիրյան 27 թիվ 14 տարածքի վարձակալության համար:

2. Կազմակերպությանը կապակցված կողմ է հանդիսանում նաև «Կորպորատիվ կառավարման կենտրոն» հիմնադրամը, որը իրականացնում է կորպորատիվ փորձագիտական ծառայությունների մատուցում և որի հոգաբարձուների խորհրդի նախագահը հանդիսանում է նաև Կազմակերպության խոշոր բաժնետեր: Տարվա ընթացքում Ընկերությունը Հիմնադրամին մատուցել է բրոքերային ծառայություն 21.3 հազ. ՀՀ դրամի: Տարվա ընթացքում Հիմնադրամը Ընկերությանը վճարել է նաև առ 31.12.2011 թ. դրությամբ փոխառության գծով հաշվեգրված տոկոսը՝ 1,462 հազ. ՀՀ դրամ:

Ծանոթագրություն 37. Ֆինանսական ռիսկերի վերաբերյալ նվազագույն բացահայտումներ

37.1 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի (ակտիվների) կողմը չի կատարի իր պարտականությունը, և այդ պատճառով ընկերությունը կտրի ֆինանսական կորուստներ:

Պարտքային ռիսկի վերլուծություն

2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հոդվածի անվանումը	ՀՀ	Այլ երկրներ	Ընդամենը
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցներ մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	-		-
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	2,313		2,313
Առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքներ	474,990		474,990
Հաճախորդների նկատմամբ պահանջներ	24,150		24,150
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր	210,719		210,719
Ընդամենը ակտիվներ	712,172		712,172
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	398,660		398,660
Այլ պարտավորություններ	1,554		1,554
Ընդամենը պարտավորություններ	400,214		400,214
Զուտ դիրք	311,958		311,958

2010 թվականի վերջի դրությամբ

Հոդվածի անվանումը	ՀՀ	Այլ երկրներ	Ընդամենը
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցներ մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	-		-
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	7,966		7,966
Առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքներ	1,020,937		1,020,937
Հաճախորդների նկատմամբ պահանջներ	24,405		24,405
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր	211,074		211,074
Ընդամենը ակտիվներ	1,264,382		1,264,382
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	957,087		957,087
Այլ պարտավորություններ	2,844		2,844
Ընդամենը պարտավորություններ	959,931		959,931
Զուտ դիրք	304,451		304,451

37.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկի վերլուծություն

Շուկայական ռիսկը հավանականությունն է, որ շուկայական տատանումների հետևանքով, մասնավորապես, առևտրական նպատակով պահվող ֆինանսական գործիքների ապագա իրական արժեքների փոփոխությամբ ընկերությունը կկրի վնասներ:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է առավելագույնս նվազագույնի հասցնել անորոշության դաշտը, որը հնարավորություն կտա կրճատել ռիսկին ենթարկվածության աստիճանը՝ միաժամանակ ապահովելով ռիսկայնության տվյալ մակարդակի հիմնավորվածությունը:

37.3 Արտարժույթի ռիսկ

Ընկերությունն ունի դոլարով արտահայտված 130 հազար ԱՄՆ դոլարի վաճառքի ֆորվարդի պայմանագիր, որի մարման ժամկետը 2012թ. հունվարն է, որի հնարավոր ազդեցությունը գնահատվում է ոչ էական: Ընկերության զուտ ենթարկվածությունը արտարժույթային ռիսկին ներկայացված է ստորև բերված աղյուսակներում:

2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ	Ընդամենը
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	-		-
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	2,217	96	2,313
Առևտրական նպատակով պահվող ֆինանսական գործիքներ	474,990		474,990
Հաճախորդների նկատմամբ պահանջներ	24,150		24,150
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր	210,719		210,719
Ընդամենը ակտիվներ	712,380	96	712,476
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	398,660	-	398,660
Այլ պարտավորություններ	1,554		1,554
Ընդամենը պարտավորություններ	400,214	-	400,214
Զուտ դիրք	312,166	96	312,262

2010 թվականի վերջի դրությամբ

	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ	Ընդամենը
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	-		-
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	7,875	91	7,966
Առևտրական նպատակով պահվող ֆինանսական գործիքներ	1,020,937		1,020,937

Հաճախորդների նկատմամբ պահանջներ	24,405		24,405
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր	211,074		211,074
Ընդամենը ակտիվներ	1,264,291	91	1,264,382
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	774,491	182,596	957,087
Այլ պարտավորություններ	2,844		2,844
Ընդամենը պարտավորություններ	777,335	182,596	959,931
Զուտ դիրք	486,956	(182,505)	304,451

Արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ածանցյալ ֆինանսական գործիքների տեսակների.

Ածանցյալ ֆինանսական գործիքների տեսակները	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ	Ընդամենը
Սվոպերի գծով			
-պարտավորություններ	-	-	-
-պահանջներ	-	-	-
Ֆորվարդների գծով			
-պարտավորություններ	-	50,150	50,150
-պահանջներ	48,596	-	48,596
Զուտ դիրք ըստ ածանցյալ ֆինանսական գործիքների	48,596	(50,150)	(1,554)
Զուտ բաց դիրք*		(1,554)	(1,554)

37.4.Տոկոսադրույքի ռիսկ 31.12.2011 թվականի դրությամբ

Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3 ամիս		3-ից մինչև 6 ամիս		6-ից մինչև 1 տարի		1-ից մինչև 5 տարի		5 տարուց ավելի	
	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով
Տեղաբաշխված միջոցներ												
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում՝												
-ավանդներ												
Հաճախորդների նկատմամբ պահանջներ, այդ թվում՝					24,150		-					
- վարկեր												
-ռեպո համաձայնագրեր												
-այլ					24,150		-					
Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթեր, այդ թվում՝	-	-	-	-	-	-	214,791	-	205,340	-	-	-
- երկարաժամկետ պարտք. գործիքներ	-	-	-	-	-	-	214,791	-	225,448	-	20,300	-
-կարճաժամկետ պարտք. գործիքներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր											210,719	
Ընդամենը	-	-	-	-	24,150	-	214,791	-	225,448		231,019	-
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում՝	398,660	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
- վարկեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
-ռեպո համաձայնագրեր	398,660	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
-այլ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	635,346	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Զուտ դիրք	(398,660)	-	-	-	24,150	-	214,791	-	225,448	-	231,019	-

Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3 ամիս		3-ից մինչև 6 ամիս		6-ից մինչև 1 տարի		1-ից մինչև 5 տարի		5 տարուց ավելի	
	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով
Տեղաբաշխված միջոցներ												
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում՝												
-ավանդներ												
Հաճախորդների նկատմամբ պահանջներ, այդ թվում՝									24,405			
- վարկեր												
-ռեպո համաձայնագրեր												
-այլ									24,405			
Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթեր, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	-	1,020,937	-	-	-
- երկարաժամկետ պարտք. գործիքներ	-	-	-	-	-	-	-	-	1,020,937	-	-	-
-կարճաժամկետ պարտք. գործիքներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր											211,074	
Ընդամենը	-	-	-	-	-	-	-	-	1,045,342		211,074	-
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ.-ների նկատմամբ, այդ թվում՝	591,698	-	182,793	182,596	-	-	-	-	-	-	-	-
- վարկեր	-	-	-	182,596	-	-	-	-	-	-	-	-
-ռեպո համաձայնագրեր	591,698	-	182,793	-	-	-	-	-	-	-	-	-
-այլ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	591,698	-	182,793	182,596	-	-	-	-	-	-	-	-
Զուտ դիրք	(591,698)	-	(182,793)	(182,596)	-	-	-	-	1,045,342	-	211,074	-

Տոկոսային գործիքների միջին տոկոսադրույքը

Հոդվածի անվանումը	Հաշվեու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ		Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ	
	ՀՀ դրամ	Արտարժույթ	ՀՀ դրամ	Արտարժույթ
	%	%	%	%
Ակտիվներ				
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝				
-ավանդներ				
-հաճախորդների նկատմամբ պահանջներ		5		5
Առևտրական նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթեր	12.1		11.4	
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր	9.6		9.6	
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	12.3		8.9	8
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ				

37.5 Գնային ռիսկ

Գնային ռիսկը ֆինանսական գործիքի շուկայական գնի փոփոխության հետևանքով կորուստ կրելու հավանականությունն է:

37.6.Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը պայմանավորված է այնպիսի դրսևորմամբ, որ ընկերությունը կարող է հանդիպել դժվարությունների ֆինանսական գործիքների հետ կապված պարտավորությունները մարելու համար միջոցներ հայթայթելիս:

Այն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում, որը բնական է ֆինանսական հաստատությունների համար, ինչն էլ պայմանավորված է իրականացվող գործարքների տարբերություններով և դրանց հետ կապված անորոշությամբ:

31.12.2011 թվականի դրությամբ

ԱԿՏԻՎՆԵՐ	Մարմանը մնացել է					Անժամկետ	Ընդամենը
	մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարուց ավելի		
Կանխիկ և կանխիկին հավասարեցված դրամական մջջոցներ, մնացորդներ ՀՀ ԿԲ-ում							

Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ							
Արժեթղթեր, այդ թվում՝ - առևտրական նպատակով պահվող -մինչև մարման ժամկետը պահվող				217,785 217,785	434,150 234,150 200,000		1,211,880 451,935 200,000
Այլ պահանջներ			24,150				24,150
Պայմանագրային պահանջներ**	141	11,101	26,866	37,967	228,327		323,459
Ընդամենը	141	11,101	51,016	255,752	643,173		961,183
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մարմանը մնացել է					Անժամկետ	Ընդամենը
	մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարրուց ավելի		
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	398,660	374,800					398,660
Այլ պարտավորություններ							
Պայմանագրային պարտավորություններ***	1,270						1,270
Ընդամենը	399,930	379,920					399,930

31.12.10 թվականի դրությամբ

ԱԿՏԻՎՆԵՐ	Մարմանը մնացել է					Անժամկետ	Ընդամենը
	մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարրուց ավելի		
Կանխիկ և կանխիկին հավասարեցված դրամական մջջոցներ, մնացորդներ ՀՀ ԿԲ-ում							
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ							
Արժեթղթեր, այդ թվում՝ - առևտրական նպատակով պահվող -մինչև մարման ժամկետը պահվող					1,161,040 961,040 200,000		1,161,040 961,040 200,000
Այլ պահանջներ					24,405		24,405
Պայմանագրային պահանջներ**		16,910	46,687	56,449	161,039		281,079
Ընդամենը		13,910	46,687	56,449	1,346,478		1,466,524
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մարմանը մնացել է					Անժամկետ	Ընդամենը
	մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարրուց ավելի		
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	591,698	182,793	182,596				957,087

Այլ պարտավորություններ						
Պայմանագրային պարտավորություններ***	1,322	3,036	5,178			9,536
Ընդամենը	593,020	185,829	187,774			966,623

* Պայմանագրային պահանջներ տողում լրացված են դեռևս չհաշվեգրված (հաշվեկշռում կամ հետհաշվեկշռում չարտացոլված), սակայն պայմանագրով նախատեսված ստացվելիք բոլոր գումարները (այդ թվում՝ տոկոսագումարները)՝ ըստ պայմանագրով նախատեսված մարման ժամկետների:

** Պայմանագրային պարտավորություններ տողում լրացված են դեռևս չհաշվեգրված, սակայն պայմանագրով նախատեսված վճարվելիք բոլոր գումարները (այդ թվում՝ տոկոսագումարները)՝ ըստ պայմանագրով նախատեսված մարման ժամկետների:

Ծանոթագրություն 38. Կապիտալ և կապիտալի համարժեքություն

	31/12/11	31/12/10
Կանոնադրական կապիտալ	300,000	300,000
Գլխավոր պահուստ	4,000	2,000
Ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ	3,014	9,552
Նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ	9,231	1,679
Ընդամենը	316,245	313,231

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 12 փետրվարի 2008թ. թիվ 44-Ն որոշմամբ Ընկերության համար կանոնադրական կապիտալի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափ էր սահմանված 100 մլն. դրամը, որը գործել է մինչև 2010թ. մարտի 31: ՀՀ ԿԲ խորհրդի 28.07.2009թ. թիվ 231-ն որոշմամբ վերոնշյալ որոշումը ընդունվել է նոր խմբագրությամբ, որտեղ ընդհանուր կապիտալի նվազագույն չափ սահմանվել է 300 մլն դրամ, որը ուժի մեջ է մտել 2011թ. ապրիլի 1-ից: Ստորև ներկայացվում է Ընկերության փաստացի ընդհանուր կապիտալի միջին օրական մեծությունը ըստ ամիսների:

2011 թվականի առաջինից վեցերորդ ամիսներ:

Ամիսը	Հիմնական կապիտալի Հաշվեկշռային մեծություն	Ընդամենը կապիտալ	Նորմատիվային սեփական կապիտալի հաշվարկի համար անհրաժեշտ հիմնական կապիտալից պակասեցվող գումարներ	Նորմատիվային հաշվարկին մասնակցող Հիմնական կապիտալ
Հունվար	312,496	312,496	203	312,293
Փետրվար	312,398	312,398	197	312,201
Մարտ	312,383	312,383	191	312,192
Ապրիլ	312,826	312,826	185	312,641
Մայիս	311,759	311,759	179	311,580
Հունիս	315,815	315,815	173	315,642
Հուլիս	317,602	317,602	166	317,436

Օգոստոս	317,847	317,847	160	317,687
Սեպտեմբեր	316,954	316,954	154	316,800
Հոկտեմբեր	317,465	317,465	148	317,317
Նոյեմբեր	320,820	320,820	142	320,678
Դեկտեմբեր	318,839	318,839	135	317,703

2010 թվականի առաջինից երրորդ ամիսներ:

Ամիսը	Հիմնական կապիտալի Հաշվեկշռային մեծություն	Ընդամենը կապիտալ	Նորմատիվային սեփական կապիտալի հաշվարկի համար անհրաժեշտ հիմնական կապիտալից պակասեցվող գումարներ	Նորմատիվային հաշվարկին մասնակցող Հիմնական կապիտալ
Հունվար	151,125	151,125	91	151,034
Փետրվար	144,985	144,985	1.613	143,372
Մարտ	133,133	133,133	85	133,048
Ապրիլ	127,348	127,348	32,177	92,101
Մայիս	136,227	136,227	40,237	95,990
Հունիս	141,415	141,415	40,231	101,184
Հուլիս	141,759	141,759	40,224	101,534
Օգոստոս	146,131	146,131	40,218	102,426
Սեպտեմբեր	146,753	146,753	9,558	137,015
Հոկտեմբեր	146,003	146,003	222	145,781
Նոյեմբեր	283,258	283,258	216	283,042
Դեկտեմբեր	308,807	308,807	209	308,598

Ծանոթագրություն 39. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք

Ընկերությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշում է շուկայական գնանշումների հիման վրա: Բոլոր առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքներն արտացոլված են իրական արժեքներով, բացառությամբ փոխառությունների և վարկերի, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Դրանց իրական արժեքը գնահատվում է հաշվեկշռային արժեքին մոտ:

Ծանոթագրություն 40. Կանխատեսվող ապագա գործարքների հեջավորում

31.12.11 թ. դրությամբ կանխատեսվող ապագա գործարքներ առկա չեն եղել:

Ծանոթագրություն 41. Ապաճանաչում

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ փոխանցված ակտիվի ամբողջությամբ կամ դրա մի մասի ապաճանաչման չափանիշներին չբավարարման դեպք չի եղել:

Ծանոթագրություն 42. Գրավադրված ակտիվներ

31.12.11թ. դրությամբ ընկերությունն գրավադրված ակտիվներ չունի:

Ծանոթագրություն 43. Ընդունված գրավ

Ընկերությունը 31.12.11թ. դրությամբ գրավով ապահովված ակտիվներ չի ունեցել:

Ծանոթագրություն 44. Պարտավորությունների չկատարում/խախտում

31.12.11թ. դրությամբ ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունների խախտում չի եղել:

Ընկերության առանցքային անձնակազմը ստացել է հետևյալ հատուցումները, որոնք ներառված են աշխատավարձի գծով ծախսումներում.

հազ. դրամ	2010թ.	2011թ.
Աշխատավարձ և պարգևավճար	3,045	3,024
Սոցիալական ապահովության վճարներ	320	319
	3,365	3,343

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի ղեկավարության հայտարարությունը

Մենք պատասխանատու ենք Ընկերության ֆինանսական վիճակը արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար:

Այսպիսով Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է՝

- հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,
- հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,
- ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման, իսկ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար,
- հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
- ֆինանսական հաշվետվությունները ընկերության գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար,

Ընկերությունում գործում է Ընկերության ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգ,

- Ընկերությունում ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ:

Հավաստիացնում ենք նաև, որ ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին:

Գլխավոր տնօրեն

Տիգրան Կարապետյան

Գլխավոր հաշվապահ

Կարեն Խաչատրյան

**«Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ
լիազոր ներկայացուցիչ**

**«ԿԱՊԻՏԱԼ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆՏ» ՓԲԸ-ի 2011թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Հաշվի առնելով «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հեռանկարային զարգացման պլանները և ՀՀ ֆինանսական շուկայի ներկա վիճակը՝ Ընկերության կառավարման մարմինները 2011թ. գործունեությունը համարում են բավարար, թեև մի շարք ցուցանիշներ իրենց մակարդակով զիջում են նախորդ՝ 2010թ-ի արդյունքներին:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը շարունակել է իր որդեգրած քաղաքականությունը և հավատարիմ մնալով իր ստանձնած սկզբունքներին՝ գործել է իր շահառուների համար արժեք ստեղծելու ուղղությամբ՝ կիրառելով գիտելիքի և փորձի հենքի վրա հիմնված կառավարում:

Նախորդ պլանային ժամանակաշրջանում Ընկերությունն իր կորպորատիվ և ֆիզիկական անձ հաճախորդներին մատուցել է ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայությունների ողջ սպեկտրը:

Այս առումով Ընկերությունը լուծել է նախորդ պլանային ժամանակաշրջանի իր հիմնական խնդիրը:

2011թ-ին Ընկերությունը պահպանել է ՀՀ արժեթղթերի շուկայում իր անունից և հաշվին գործարքների իրականացման ակտիվությունը: Այդ է վկայում Ընկերության զուտ տոկոսային եկամուտների զգալի աճը նախորդ տարվա համեմատ: Ընդ որում՝ Ընկերությունը բավական ակտիվ է ինչպես պետական, այնպես էլ կորպորատիվ արժեթղթերի շուկայում իրականացվող գործառնություններով:

հազ. ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	2011թ.	2010թ.	Աճ/Նվազում
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտներ	38,669	23,482	15,187
Զուտ կոմիսիոն և այլ վճարներ	7,141	13,988	-6847
Գործառնական եկամուտներ	50,669	48,150	2519
Զուտ շահույթ հարկումից հետո	3,014	10,952	-7938

Կոմսիոն եկամուտների նվազումը մեծապես պայմանավորված է ՀՀ արժեթղթերի շուկայում թողարկողների պասիվությամբ և դրանով պայմանավորված անդերռայթինգային ծառայությունների ծավալների նվազմամբ: Գործառնական եկամուտները պահպանվել են գրեթե նույն մակարդակում, մինչդեռ ընդհանուր վարչական ծախսերի զգալի աճը հանգեցրել է Ընկերության զուտ շահույթի նվազմանը նախորդ տարվա համեմատ:

Ընկերության գործունեության հիմնական ռազմավարական ցուցանիշները բերված են ստորև՝

Ցուցանիշի անվանումը	2011թ.	2010թ.	Աճ/Նվազում
Ակտիվներ	721,529	1,277,566	-556,037
Պարտավորություններ	405,284	964,335	-559,051
Ընդհանուր կապիտալ	316,245	313,231	3014
Զուտ շահույթ հարկումից հետո	3,014	10,952	-7938
ROA (ակտիվների շահութաբերություն),%	0.3%	0.9%	-0.6%
ROE (կապիտալի շահութաբերություն),%	1.0%	4.7%	-3.7%
Աշխատակիցների քանակ	11	10	1
Հաճախորդների քանակ	196	173	23

Ընկերության պարտավորությունների, հետևաբար նաև ակտիվների նվազման հիմնական պատճառը Ընկերության կողմից ներգրաված փոխառության մարումն է ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված միջոցների հաշվին: Վերոնշյալ գործոնների հետևանքով զուտ շահույթի նվազման արդյունքում արձանագրվեց շահութաբերության ցուցանիշների անկում:

Ընկերությունում հաշվետու տարվա ընթացքում շարունակվել են ռիսկերի կառավարման ոլորտի բարեփոխումների ու բարելավման ծրագրերը:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկի հաշվարկման ժամանակ ընդգրկվում են Ընկերության ակտիվները՝ ըստ ռիսկի կշիռների: Ընկերության կողմից իրականացվել է վարկային ռիսկի արդյունավետ կառավարում: Վերջինիս մասին վկայում է այն փաստը, որ ցածր ռիսկի կշիռ ունեցող ակտիվների ծավալը գերազանցել է բարձր ռիսկի կշիռ ունեցող ակտիվներին:

Արտարժութային ռիսկ

Ներդրումային ընկերության ակտիվները կամ պարտավորությունները պարունակում են արտարժութային ռիսկ, երբ դրանց մեծությունները, դրանց գծով ստացվելիք կամ վճարվելիք գումարները դրամային արտահայտությամբ ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել՝ պայմանավորված արտարժույթի՝ ՀՀ դրամի նկատմամբ փոխարժեքի փոփոխությամբ: Ընկերությունը արտարժութային ռիսկի զսպման նպատակով իրականացրել է փակ արտարժութային դիրքի պահպանման (բաց դիրքի սահմանափակման), արտարժութային ռիսկի հեջավորման և ամենօրյա մոնիթորինգի միջոցառումներ:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսային ռիսկը ակտիվների արժեզրկման կամ եկամուտների նվազման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների մակարդակի փոփոխության հետևանքով: Վերջինիս զսպման համար կիրառվել են տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների կառավարման մի շարք մեթոդներ (դիվերսիֆիկացիա, դյուրացիա, ստանդարտ և այլն):

Բաժնային արժեթղթերի գնային ռիսկ

Այն իրենից ներկայացնում է բաժնային արժեթղթերը արագորեն, առանց էական գնային և ժամանակային կորստի կանխիկ դրամական միջոցների վերածման հնարավորության նվազման ռիսկ: Ընկերությունը նշված ռիսկի զսպման նկատառումներով ձևավորել է բաժնային արժեթղթերի դիվերսիֆիկացված փաթեթ:

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկի կառավարումն իրականացվում է Ընկերությունում մշակված քաղաքականության հիման վրա, որը նպատակաուղղված է ներքին գործընթացների անկատարությունների, անձնակազմի ոչ համարժեք գործողությունների, այդ թվում՝ վրիպումների և սխալների, ինչպես նաև արտաքին գործոնների ազդեցությամբ առաջացող կորուստների ու վնասների կանխարգելմանը: Գործառնական ռիսկի զսպման ուղղությամբ իրականացված միջոցառումներից կարելի է առանձնացնել ներքին կանոնակարգման

կատարելագործումը, աշխատակիցների ընդունման, նրանց գործառնությունների թափանցիկության և գործունեության հսկողության բարձրացում, անձնական պատասխանատվության ուժեղացում:

Գլխավոր տնօրեն

Տիգրան Կարապետյան

Գլխավոր հաշվապահ

**Կարեն Խաչատրյան «Էյ Էն Աուդիտ»
ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ**